

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ՓԱՓԱԶՅԱՆԻ
(1902—1972)

Օգոստոսի 13-ին, 70 տարեկան հասակում, երկարատև հիվանդությունից հետո, Երևանում ի Տեր հանգչավ արժանապատիվ տ. Գևորգ քհն. Փափազյանը:

Հանգուցյալը ծնվել է 1902 թվականին Կ. Պոլսում: Նա իր կրթությունը ստացել է տեղի թաղային դպրոցում:

1934 թվականին տեղափոխվում է Պաղեստին, Հայֆա քաղաք, որտեղ կատարում է հասարակական-ազգային մի շարք պաշտոններ՝ ծառայելով նաև որպես տիրացու տեղի հայոց ս. Եղիա մատրան մեջ:

1946 թվականին երբ սկսվում է ներգաղթը, հանգուցյալը բերում է իր մասնակցությունը հայրենանվեր այս մեծ գործին: Իսկ ինքը ընտանիքով 1947 թվականին վերադառնում է Հայաստան և մշտական բնակություն հաստատում Երևանում:

Հայ եկեղեցու նկատմամբ նա դեռևս փոքր հասակից մեծ սեր ու հարգանք ուներ, և այդ զգացումները 1957 թվականին նրան բերում են հայ եկեղեցու սպասավորության գործին:

Նույն թվականին Սահակ արքեպ. Տեր-Հովհաննիսյանի կողմից ձեռնադրվում է քահանա:

Տեր հայրը երկու տարի պաշտոնավարում է Աշտարակի ս. Մարիանե, ապա՝ Երևանի ս. Հովհաննես եկեղեցիներում:

Տ. Գևորգ քահանայի ժրաջան գործունեությունը չի վրիպում ազգիս Վեհափառ Հայրապետի ուշադրությունից և 1964 թվականին նրան իրավունք է տրվում կրելու քահանայական լանջախաչ:

1972 թվականի օգոստոսի 15-ին, երեքշաբթի օրը, Երևանի ս. Հովհաննես եկեղեցում կատարվում է տ. Գևորգ քահանայի վերջին օծումը և թաղման կարգը: Նրա կյանքի և գործունեության մասին դամբանական է խոսում տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը:

Տ. Գևորգ քահանան եղել է ժրաջան, հավատավոր հոգևորական և որտեղ էլ որ քահանայագործել է, վայելել է իր հոտի սերն ու հարգանքը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն»: